ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040
vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

02 դեկտեմբերի 2022 թվականի N 873

ՏԻԳՐԱՆ ՌԵԳԱԼԻ ՄԱԼԽԱՍՅԱՆԻՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1. ՀՀ Վանաձոր համայնքի ղեկավարի որոշման կարգավորման առարկան.

ՀՀ Լոռու մարզի Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության բաժնի կողմից 3 նոյենբերի 2022 թվականին կազմվել է արձանագրություն և զեկուցագիր, որի հիման վրա «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի հիմքով հարուցվել է վարչական վարույթ:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով հարուցված և իրականացված վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննության ընթացքում գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության արդյունքում, բացահայտելով գործի բոլոր հանգամանքները, վարչական մարմինը հաստատված է համարում հետևյալը.

2. Վարչական ակտ ընդունելու համար հիմք հանդիսացող փաստերը.

Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության բաժնի կողմից 19.05.2022 թվականին կազմված արձանագրության և զեկուցագրի համաձայն՝ Տիգրան Ռեգալի Մալխասյանը Վանաձոր քաղաքի Լազյանի թող թիվ 48 փողոց, հասցեում կատարել է ինքնակամ շինարարական աշխատանքներ:

2022 թվականի նոյեմբերի 3 ին հարուցված վարչական վարույթի հիման վրա 2022 թվականի նոյեմբերի 14-ին հրավիրվել են վարչական վարույթի լսումներ:

Վարչական վարույթի լսումներին ներկայացել է Տիգրան Ռեգալի Մակխասյանը (հիմք՝ , LO106463595AM) հայտնել է որ հանդիսանում է Լազյան 48 տան սեփականատեր, և իրականցրել է հյուսիսային պատի քանդման աշխատանքներ,հետագայում վերակառուցման նպատակով,քանի որ պատը գտնված է վթարային վիճակում և կար փլուզման վտանգ: ԵՎ պարտավորվում է հետագա աշխատանքները կատարել միայն շինթույլտվություն ստանալուց հետո:

3. Վարչական ակտ ընդունելու հիմնավորումը.

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 9-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական իրավախախտում (զանցանք) է համարվում պետական կամ հասարակական կարգի, սոցիալիստական սեփականության, քաղաքացիների իրավունքների և ազատությունների, կառավարման սահմանված կարգի դեմ ոտնձգվող հակաիրավական, մեղավոր (դիտավորյալ կամ անզգույշ) այնպիսի գործողությունը կամ անգործությունը, որի համար օրենսդրությամբ նախատեսված է վարչական պատասխանատվություն:

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 10-րդ հոդվածի համաձայն՝ վարչական իրավախախտումը համարվում է դիտավորությամբ կատարված, եթե այն կատարող անձը գիտակցել է իր գործողության կամ անգործության հակաիրավական բնույթը, կանխատեսել է դրա վնասակար հետևանքները և ցանկացել դրանք, կամ գիտակցաբար թույլ է տվել այդ հետևանքների առաջացումը:

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 32-րդ հոդվածի դրույթների համաձայն՝ վարչական իրավախախտման համար տույժը նշանակվում է կատարված իրավախախտման համար պատասխանատվություն նախատեսող նորմատիվ ակտով սահմանված շրջանակներում, «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ

նշանակելիս հաշվի են առնվում կատարված իրավախախտման բնույթը, խախտողի անձը, նրա մեղքի աստիճանը, գույքային դրությունը, պատասխանատվությունը մեղմացնող և ծանրացնող հանգամանքները:

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 40-րդ հոդվածի համաձայն՝ վարչական տույժ նշանակելը վարչական իրավախախտում կատարած անձին չի ազատում այն պարտականության կատարումից, որը չկատարելու համար նշանակվել էր վարչական տույժ:

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ սեփականության կամ հողօգտագործման իրավունք ունեցող անձի կողմից այդ հողամասի վրա, ինչպես նաև անհատական բնակելի տներում կամ ստորաբաժանված կամ բազմաբնակարան շենքերում կամ շենքերին կից, օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով այդ նպատակի համար չհատկացված հողամասում կամ առանց թույլտվության կամ թույլտվությամբ սահմանված պայմանների կամ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով շենք, շինություն կամ այլ կառույց կառուցելը կամ վերակառուցելը կամ տեղադրելը կամ առանց թույլտվության շինարարություն կամ տեղադրման թույլտվություն պահանջող շինարարական աշխատանքներ իրականացնելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկից հազարապատիկի չափով:

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 2191-րդ հոդվածի համաձայն՝ տեղական ինքնակառավարման մարմինները իրենց իրավասության սահմաններում քննում են օրենսգրքի 154-րդ հոդվածով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը: Համայնքի ղեկավարը տեղական ինքնակառավարման մարմինների անունից նշված հոդվածի վերաբերյալ գործեր քննելու և վարչական տույժ նշանակելու իրավունք ունի:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 40-րդ, 154-րդ, 2191-րդ, 245-րդ, 279-րդ հոդվածներով և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 4-րդ մասով, 30-րդ հոդվածի 1-ին մասով, 53-րդ, 58-60-րդ հոդվածներով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի, 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով՝

ՈՐՈՇԵՑԻ

1. Տիգրան Ռեգալի Մալխասյանին ենթարկել վարչական պատասխանատվության՝ «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված արարք կատարելու համար և նշանակել տուգանք՝ 500.000 (հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ:

2. Արամ Մանուկի Երանոսյանին՝ տուգանքի գումարը վճարել Վանաձորի ՏԳԲ 900235401537 հաշվարկային հաշվին:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում վարչական ակտի հասցեատիրոջն իրազեկելուն հաջորդող օրվանից:

4. Սույն որոշումը համարվում է վարչական ակտի հասցեատիրոջը հանձնված (պատշաճ ծանուցված) նաև որոշման մասին ծանուցումը Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում (azdarar.am) տեղադրելու օրվան հաջորդող հինգերորդ օրը:

5. Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Վանաձոր համայնքի ղեկավարին դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ երկամսյա ժամկետում:

6. Սույն որոշման պահանջները չկատարելու դեպքում, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 88-րդ հոդվածով սահմանված կարգով այն ենթակա է հարկադիր կատարման՝ ՀՀ ԱՆ հարկադիր կատարումն ապահովող ծառայության միջոցով՝ անբողոքարկելի դառնալուց հետո եռամսյա ժամկետում:

7. Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն իրականացնում է Վանաձոր համայնքի ղեկավարը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2022թ. դեկտեմբերի 02
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040
vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

05 դեկտեմբերի 2022 թվականի N 874

ՎԱՆԱՁՈՐ ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ Վ. ՏԵՐՅԱՆ ՓՈՂՈՑ 1-ԻՆ ՓԱԿՈՒՂԻ 16 ՀԱՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ՃՇՏՎԱԾ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Արարատ Սերյոժայի Թորոսյանի 30.11.2022 թվականի թիվ 16366 դիմումը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 25112022-06-0006 վկայականը, 25.11.2022թ. ՀՀ կադաստրի կոմիտե Լոռու մարզային ստորաբաժանման թիվ ՄՏ-25112022-06-0159 միասնական տեղեկանքը, ԱՐՏՅՈՄ ՍԱՔԱՆՅԱՆ ՌՈՒԴԻԿԻ ԱՁ-ի կողմից տրված հողամասի հատակագիծը և եզրակացությունը, ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 59-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ կառավարության 29.04.2021թ. թիվ 698 որոշումով՝ ***որոշում եմ.***

Հաստատել Վանաձոր քաղաքի Վ. Տերյան փողոց 1-ին փակուղի 16 հասցեում գտնվող բնակելի տան զբաղեցրած 0.0355 հա մակերեսով հողամասի ճշտված սահմանները՝ համաձայն համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծի:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2022թ. դեկտեմբերի 05
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040
vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

05 դեկտեմբերի 2022 թվականի N 875

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 25 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 708 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Նաիրա Վաղինակի Մխոյանի դիմումը, ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝ ***որոշում եմ.***

Վանաձոր համայնքի ղեկավարի 25 հոկտեմբերի 2022 թվականի «Անչափահաս Վաղինակ Արայիկ Մխոյանի նկատմամբ խնամակալություն սահմանելու մասին» թիվ 708 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը.

1. Որոշման մեջ «(ծնված՝ 07.07.1972թ., անձնագիր՝ AM 0666376, տրված՝ 07.03.2012թ., 066-ի կողմից)» բառերը փոխարինել «(ծնված՝ 07.07.1972թ., անձնագիր՝ AV 0281685, տրված՝ 23.06.2022թ., 066-ի կողմից)» բառերով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2022թ. դեկտեմբերի 05
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040
vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

05 դեկտեմբերի 2022 թվականի N 876

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 03 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 758 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Վանաձոր համայնքի ղեկավարի 03 նոյեմբերի 2022 թվականի թիվ 758 որոշումը, ՀՀ կադաստրի կոմիտեի գույքի նկատմամբ իրավունքի (սահմանափակման) պետական գրանցման վարույթը կասեցնելու մասին 25.11.2022 թվականի թիվ Կ-25112022-06-0121 որոշումը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝ ***որոշում եմ.***

Վանաձոր համայնքի ղեկավարի 03 նոյեմբերի 2022 թվականի «Վանաձոր քաղաքի Աղայան փողոց թիվ 76 հասցեին կից գտնվող ինքնակամ կառուցված շինության և դրանով զբաղեցված ու սպասարկման համար անհրաժեշտ հողամասի նկատմամբ Վանաձոր համայնքի սեփականությունը ճանաչելու, շինությունն օրինականացնելու, հողամասի գործառնական նշանակությունը փոխելու և փոստային հասցե տրամադրելու մասին» թիվ 758 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1.Որոշման 1-ին և 4-րդ կետերում «շինության» բառը փոխարինել «հարթակի» բառով:

2. Որոշման 5-րդ կետում «շինությունը» բառը փոխարինել «հարթակը» բառով:

3. Որոշման 6-րդ կետում «շինություն» բառը փոխարինել «հարթակ» բառով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2022թ. դեկտեմբերի 05
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040
vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

05 դեկտեմբերի 2022 թվականի N 877

ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ԼՈՌՎԱ ՓՈՂՈՑ ԹԻՎ 6 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ԿԻՑ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ԴՐԱ ՎՐԱ ԳՏՆՎՈՂ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՄԼԵՏ ԳԵՂԱՄԻ ՊՈՂՈՍՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Համլետ Գեղամի Պողոսյանի (ծնված՝ 03.07.1946թ.) լիազորված անձ Գոհար Համլետի Մխիթարյանի դիմումը, 07.10.2022թ. տրված թիվ 6417 (նոտարական ակտի կոդ 594-20221007-79-6332473) լիազորագիրը, 05.01.1994թ. տրված սեփականության վկայագիրը, հանրային ծառայություններ մատուցող կազմակերպությունների եզրակացությունները, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, «Վանաձորի նախագծող» ՍՊԸ-ի կողմից 25.11.2022թ. տրված շինությունների տեխնիկական վիճակի վերաբերյալ թիվ ՎՆ1-226/22 Ի եզրակացությունը, ԳԱՍՊԱՐ ՎԵՔԻԼՅԱՆ ԱՁ-ի կողմից տրված հողամասի, շինությունների հատակագիծը, շինությունների բնութագիրը, ՀՀ կադաստրի կոմիտեի կողմից 23.11.2022 թվականին տրված հաշվառման (չափագրման) տվյալների մուտքագրման տեղեկանքը (չափագրման տվյալների մուտքագրման ծածկագիր: 2022AP8C6V), շինությունների բնութագիրը և հաշվի առնելով այն, որ Վանաձոր քաղաքի Լոռվա փողոց թիվ 6 հասցեում կառուցած բնակելի տան կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ օրինական 138.0քմ և դրան կից 174.9քմ մակերեսներով հողամասերը, դրանց վրա կառուցված բնակելի նշանակության շինությունները չեն գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի և ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում սերվիտուտ: Անհատական բնակելի տունը կառուցվել է 1955-1996թթ.-ին, բնակելի տան զբաղեցրած և սպասարկման համար անհրաժեշտ հողամասի մակերեսը փաստացի կազմում է 312.9քմ:

Ղեկավարվելով 10.06.2008թ. «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության 2021թ. փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով՝ ***որոշում եմ.***

1. Ճանաչել Համլետ Գեղամի Պողոսյանի սեփականության իրավունքը Վանաձոր քաղաքի Լոռվա փողոց թիվ 6 հասցեի բնակելի տան կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ օրինական 138.0քմ մակերեսով հողամասին կից 174.9քմ մակերեսով հողամասի նկատմամբ:

2. Ճանաչել Համլետ Գեղամի Պողոսյանի սեփականության իրավունքը Վանաձոր քաղաքի Լոռվա փողոց թիվ 6 հասցեի բնակելի տան կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ 312.9քմ մակերեսով հողամասի վրա գտնվող բնակելի նշանակության բոլոր շինությունների նկատմամբ:

3. Հողամասի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:

4. Սույն որոշման 1-ին կետում նշված գույքին տրամադրել նոր փոստային հասցե՝ Վանաձոր, Վանաձոր ք., Լոռվա փողոց, 6/1 բնակելի տուն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2022թ. դեկտեմբերի 05
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040
vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

05 դեկտեմբերի 2022 թվականի N 878

ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՍՈՒՆԴՈՒԿՅԱՆ ՓՈՂՈՑ ԹԻՎ 53 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ԿԻՑ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ԴՐԱ ՎՐԱ ԳՏՆՎՈՂ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԺՈՐԱ ՍԵՐՅՈԺԱՅԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Ժորա Սերյոժայի Հովհաննիսյանի դիմումը, 25.08.1964թ. տրված անհատական բնակելի տան գույքային թերթը, հանրային ծառայություններ մատուցող կազմակերպությունների եզրակացությունները, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, 07.08.2019թ. տրված ըստ օրենքի ժառանգության իրավունքի թիվ 5337 (նոտարական ակտի կոդ: 763-20190801-84-4061218) վկայագիրը, «Վանաձորի նախագծող» ՍՊԸ-ի կողմից 17.11.2022թ. տրված շինությունների տեխնիկական վիճակի վերաբերյալ թիվ ՎՆ1-227/22 Ի եզրակացությունը, ԳԱՍՊԱՐ ՎԵՔԻԼՅԱՆ ԱՁ-ի կողմից տրված հողամասի, շինությունների հատակագիծը, ՀՀ կադաստրի կոմիտեի կողմից 20.11.2022 թվականին տրված հաշվառման (չափագրման) տվյալների մուտքագրման տեղեկանքը (չափագրման տվյալների մուտքագրման ծածկագիր: 20228MNXZ), շինությունների բնութագիրը և հաշվի առնելով այն, որ Վանաձոր քաղաքի Սունդուկյան փողոց թիվ 53 հասցեում կառուցած բնակելի տան կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ օրինական 166.0քմ մակերեսով հողամասը, դրա վրա կառուցված բնակելի նշանակության շինությունները չեն գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի և ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում սերվիտուտ: Անհատական բնակելի տունը կառուցվել է 1955-1985թթ.-ին, բնակելի տան զբաղեցրած և սպասարկման համար անհրաժեշտ հողամասի մակերեսը փաստացի կազմում է 166.0քմ:

Ղեկավարվելով 10.06.2008թ. «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության 2021թ. փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով՝ ***որոշում եմ.***

1. Ճանաչել Ժորա Սերյոժայի Հովհաննիսյանի սեփականության իրավունքը Վանաձոր քաղաքի Սունդուկյան փողոց թիվ 53 հասցեի բնակելի տան կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ օրինական 166.0քմ մակերեսով հողամասի նկատմամբ:

2. Ճանաչել Ժորա Սերյոժայի Հովհաննիսյանի սեփականության իրավունքը Վանաձոր քաղաքի Սունդուկյան փողոց թիվ 53 հասցեի բնակելի տան կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ 166.0քմ մակերեսով հողամասի վրա գտնվող բնակելի նշանակության բոլոր շինությունների նկատմամբ:

3. Հողամասի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:

4. Սույն որոշման 1-ին կետում նշված գույքին տրամադրել նոր փոստային հասցե՝ ք. Վանաձոր Վանաձոր ք., Գ. Սունդուկյան փողոց, 53/1 բնակելի տուն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2022թ. դեկտեմբերի 05
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040
vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

05 դեկտեմբերի 2022 թվականի N 879

ՎԱՆԱՁՈՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻՆ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարի ժամանակավոր պաշտոնակատարի զեկուցագիրը, ղեկավարվելով «Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի բ) կետով, ՀՀ աշխատանքային օրենսգրքի 219-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով՝ *որոշում եմ.*

Վանաձորի համայնքապետարանի քաղաքական, հայեցողական, աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոններ զբաղեցնող և տեխնիկական սպասարկում իրականացնող աշխատակիցներին Ամանորի և Սուրբ Ծննդյան տոների կապակցությամբ խրախուսել միանվագ դրամական պարգևատրումով՝ յուրաքանչյուրի հաստիքային դրույքաչափին համապատասխան:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2022թ. դեկտեմբերի 05
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040
vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

05 դեկտեմբերի 2022 թվականի N 880

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 24 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 700 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Էդգար Աշոտի Ասատրյանի դիմումը, Վանաձոր համայնքի ղեկավարի 24 հոկտեմբերի 2022 թվականի թիվ 700 որոշումը, ՀՀ կադաստրի կոմիտեի գույքի նկատմամբ իրավունքի (սահմանափակման) պետական գրանցման վարույթը կասեցնելու մասին 24.11.2022 թվականի թիվ Կ-24112022-06-0008 որոշումը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝ ***որոշում եմ.***

Վանաձոր համայնքի ղեկավարի 24 հոկտեմբերի 2022 թվականի «Վանաձոր Վանաձոր քաղաքի Ջեյթունի փողոց 3/8 հասցեում գտնվող հողամասը հողամասի ընդլայնման նպատակով Էդգար Աշոտի Ասատրյանին օտարելու մասին» թիվ 700 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը.

1. Որոշման նախաբանում «ՀՀ կառավարության 26.05.2016թ. թիվ 550-Ն որոշման 1-ին և 2-րդ կետերով» բառերը փոխարինել «12.04.2022թ. «ՀՀ հողային օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» ընդունած ՀՕ 93-Ն ՀՀ օրենքով» բառերով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2022թ. դեկտեմբերի 05
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040
vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

06 դեկտեմբերի 2022 թվականի N 881

ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՎԵՐԱԾՆՆԴԻ ՓՈՂՈՑ 16 ԵՎ 16-1 ՀԱՍՑԵՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ԱՄԱՆՎԵԼ ԺՈՐԱՅԻ ԱՎԵՏՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՎՐԱ ԳՏՆՎՈՂ ԳՈՒՅՔԸ ՈՐՊԵՍ ՄԵԿ ԳՈՒՅՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐ ՄԻԱՎՈՐԵԼՈՒ, ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑԱԾ ՆԱԽԱՄՈՒՏՔՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Մանվել Ժորայի Ավետյանի 27.09.2021թ. թիվ 02/13659 դիմումը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 07082017-06-0034 և թիվ 06092021-06-0030 վկայականները, «Վանաձորի նախագծող» ՍՊԸ-ի կողմից 14.10.2021թ. տրված շինությունների տեխնիկական վիճակի վերաբերյալ թիվ ՎՆ 1-140/21 Ի եզրակացությունը, ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի ղեկավարի տեղակալի 19.11.2021 թվականի թիվ ՔՏՄ/09.2.4/15481-21 գրությունը, ԳԱՍՊԱՐ ՎԵՔԻԼՅԱՆ ԱՁ-ի կողմից տրված հողամասի և շինությունների հատակագծերը, շինությունների բնութագիրը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 9-րդ, 10-րդ, 11-րդ, 17-րդ կետերով և 18-րդ կետի բ) ենթակետերով, ՀՀ կառավարության 2021թ. փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 2-րդ ենթակետով՝ ***որոշում եմ.***

1. Միավորել Վանաձոր քաղաքի Վերածննդի փողոց 16 և 16-1 հասցեներում գտնվող, Մանվել Ժորայի Ավետյանին սեփականության իրավունքով պատկանող ընդհանուր 0,032314հա մակերեսով հողամասերը և դրանց վրա գտնվող 335.8քմ մակերեսով շինությունը՝ համաձայն ԳԱՍՊԱՐ ՎԵՔԻԼՅԱՆ ԱՁ-ի կողմից տրված հատակագծի:
2. Ճանաչել օրինական Մանվել Ժորայի Ավետյանին սեփականության իրավունքով պատկանող, այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը չխախտող, քաղաքացիների կյանքին ու առողջությանը վտանգ չսպառնացող, ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներից դուրս, առանց քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումների իրականացված և հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք չառաջացնող, Վանաձոր քաղաքի Վերածննդի փողոց 16 և 16-1 հասցեներում գտնվող ինքնակամ կառուցված 30.18քմ արտաքին մակերեսով (ներքին մակերեսը՝ 26.11քմ) նախամուտքը:
3. Սույն որոշման 2-րդ կետում նշված 30.18քմ արտաքին մակերեսով ինքնակամ կառուցված նախամուտքի օրինականացման համար սահմանված վճարը՝ 118850 (հարյուր տասնութ հազար ութ հարյուր հիսուն) դրամ գումարը, 60-օրյա ժամկետում չվճարելու դեպքում սույն որոշումը կհամարվի ուժը կորցրած:
4. Սույն որոշման 1-ին և 2-րդ կետերում նշված գույքին տրամադրել փոստային հասցե՝ ք.Վանաձոր, Վերածննդի փողոց, 16 խանութ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2022թ. դեկտեմբերի 06
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040
vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

06 դեկտեմբերի 2022 թվականի N 882

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 19-Ի <<ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՊԼԱՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> ԹԻՎ 7 ՈՐՈՇՄԱՆ ՀԱՎԵԼՎԱԾՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով հաստատված եռամսյակային բաշխումները և հաշվի առնելով գնումների պատասխանատու ստորաբաժանման կողմից ներկայացված գնման առարկաների բնութագրերի նախագիծը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Գնումների մասին» ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության 2017թ ապրիլի 13-ի «Գնումների պլանի ձևը, դրա լրացման, հաստատման և հրապարակման կարգը հաստատելու մասին» թիվ 390-Ն որոշմամբ հաստատված թիվ 3 հավելվածով՝ ***որոշում եմ.***

Վանաձոր համայնքի ղեկավարի 2022 թվականի մայիսի 19-ի <<Վանաձոր համայնքի 2022 թվականի գնումների պլանը հաստատելու մասին>> թիվ 7 որոշման հավելվածում կատարել լրացում՝ համաձայն հավելվածի:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2022թ. դեկտեմբերի 06
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040
vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

07 դեկտեմբերի 2022 թվականի N 883

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 03 ՄԱՐՏԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 534
ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝ ***որոշում եմ.***

Վանաձոր համայնքի ղեկավարի 03 մարտի 2020 թվականի «Վանաձոր համայնքի զոհված զինծառայողների, զինծառայողների ընտանիքների սոցիալական պաշտպանվածության բարելավման, պատերազմի վետերանների սոցիալական խնդիրների լուծման, հաշմանդամների, կերակրողին կորցրած ընտանիքների, սոցիալապես անապահով այլ խավերի սոցիալական պայմանների բարելավման վերաբերյալ դիմումները քննարկելու նպատակով հանձնաժողով ստեղծելու և Վանաձոր համայնքի ղեկավարի 2017 թվականի նոյեմբերի 07-ի թիվ 1256-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 534 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1. Որոշման 1-ին կետի 2-րդ ենթակետում «Լիլիթ Խաչատրյան- Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի հանրային կապերի, լրատվության և արարողակարգի բաժնի գլխավոր մասնագետ» բառերը փոխարինել «Վարդուշ Գևորգյան- Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի հանրային կապերի, լրատվության և արարողակարգի բաժնի առաջատար մասնագետ» բառերով:

2. Որոշման 14-րդ կետում «Անահիտ Վարդանյան- Դարպասի համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ:» բառերը փոխարինել «Արթուր Աբրահամյան- Դարպասի համայնքապետարանի աշխատակազմի առաջին կարգի մասնագետ» բառերով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2022թ. դեկտեմբերի 07
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040
vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

07 դեկտեմբերի 2022 թվականի N 884

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 04 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 905-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Ֆենյա Հարությունի Հարությունյանի 30.06.2022թ. թիվ 02/6678 դիմումը, 15.05.1990թ. տեխնիկական անձնագրերը, Վանաձոր համայնքի ղեկավարի 04 սեպտեմբերի 2012 թվականի թիվ 905-Ա որոշումը, 29.06.2022թ. և 02.12.2022թ. ՀՀ կադաստրի կմիտեի գույքի առանձին որակական քանակական բնութագրերի և դրա նկատմամբ առանձին իրավունքների (սահմանափակումների) վերաբերյալ թիվ ԱՏ-29062022-06-1053 և թիվ ԱՏ-02122022-06-0596 տեղեկանքները, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝ *որոշում եմ.*

Վանաձոր համայնքի ղեկավարի 04 սեպտեմբերի 2012 թվականի «Վանաձոր քաղաքի Զոր. Անդրանիկի փողոցի թիվ 1-1 հասցեում գտնվող հողամասի հողհատկացման հիմքերը վերականգնելու, Ֆենյա Հարությունյանին հողամաս վերահատկացնելու, միջև 15.05.2001թ. ինքնակամ կառույցների նկատմամբ նրա սեփականության իրավունքը ճանաչելու, ինքնակամ կառուցած օժանդակ շինություններն օրինականացնելու և նշված անշարժ գույքին նոր փոստային հասցե տրամադրելու մասին» թիվ 905-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը.

1. Որոշման 1-ին կետի ա/ ենթակետը շարադրել հետևյալ նոր բովանդակությամբ.

«ա/ հողամասի մակերեսը 559.6քմ, որը հանդիսանում է ընդհանուր բաժնային սեփականություն երկու տնատիրությունների միջև հավասար բաժնեմասերով / Ֆենյա Հարությունյանի բաժնեմասը կազմում է 279.8քմ/» ;

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2022թ. դեկտեմբերի 07
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040
vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

07 դեկտեմբերի 2022 թվականի N 885

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 26 ՀՈՒԼԻՍԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 755-Ա ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Վանիկ Արամայիսի Ղուբաթյանի դիմումը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածով՝ ***որոշում եմ.***

1. Ուժը կորցրած ճանաչել Վանաձոր համայնքի ղեկավարի 26 հուլիսի 2012 թվականի «Վանիկ Ղուբաթյանին հողամաս տրամադրելու մասին» թիվ 755-Ա որոշումը՝ 03.08.2012թ. համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի կառուցապատման իրավունքի տրամադրելու մասին (մրցույթով) թիվ 159 պայմանագիրը համարելով լուծված:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2022թ. դեկտեմբերի 07
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040
vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

07 դեկտեմբերի 2022 թվականի N 886

ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ԵՐԵՎԱՆՅԱՆ ԽՃՈՒՂԻ 237/1 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ԳԱԳԻԿ ԲԱԲԿԵՆԻ ԿԻՐԱԿՈՍՅԱՆԻՆ, ԱՐՄԱՆ ԳԱԳԻԿԻ ԿԻՐԱԿՈՍՅԱՆԻՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱԺՆԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԵՎ ԵՐԵՎԱՆՅԱՆ ԽՃՈՒՂԻ ԹԻՎ 237/2 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ԲԱԲԿԵՆ ՀՄԱՅԱԿԻ ԿԻՐԱԿՈՍՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏՆԵՐԻ ՄԻՋԵՎ ԳՏՆՎՈՂ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏԱԿ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ՈՐՊԵՍ ԵՐԿՈՒ ԱՌԱՆՁԻՆ ԳՈՒՅՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐ ՏԱՐԱՆՋԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Արման Գագիկի Կիրակոսյանի լիազորված անձ Ռիմա Սերգեյի Հովհաննիսյանի, Գագիկ Բաբկենի Կիրակոսյանի լիազորված անձ Անաստաս Արամի Էվոյանի և Բաբկեն Հմայակի Կիրակոսյանի լիազորված անձ Սուսան Վաչագանի Կիրակոսյանի դիմումը, 24.08.2022թ. թիվ 66 ԱԱ 7514250 լիազորագրի ռուսերենից հայերեն թիվ 3798 թարգմանությունը (նոտարական ակտի կոդ: 843-20220831-67-6223983), 31.05.2022թ. թիվ 43 AA 1477858 լիազորագրի ռեուսերենից հայերեն թիվ 4665 թարգմանությունը (նոտարական ակտի կոդ: 763-20220801-67-6132658) թարգմանությունը, 05.07.2022թ. թիվ 68 ԱԱ 1616062 լիազորագրի ռուսերենից հայերեն թիվ 5011 թարգմանությունը (նոտարական ակի կոդ: 763-20220818-64-6186459), անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 06032019-06-0036 և անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման թիվ 2222577 վկայականները, ԳԱՍՊԱՐ ՎԵՔԻԼՅԱՆ ԱՁ-ի կողմից տրված հողամասի հատակագծերը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով՝ ***որոշում եմ.***

1. Տարանջատել Վանաձոր քաղաքի Երևանյան խճուղի 237/1 հասցեում գտնվող, Գագիկ Բաբկենի Կիրակոսյանին և Արման Գագիկի Կիրակոսյանին ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանող, Երևանյան խճուղի թիվ 237/2 հասցեում գտնվող, Բաբկեն Հմայակի Կիրակոսյանին սեփականության իրավունքով պատկանող բնակելի տների միջև գտնվող ընդհանուր օգտագործման 97.3քմ մակերեսով հողամասը հավասար բաժիններով յուրաքանչյուրին 48.65քմ(97.3:2)՝ համաձայն ԳԱՍՊԱՐ ՎԵՔԻԼՅԱՆ ԱՁ-ի կողմից տրված հատակագծերի:

Արման Գագիկի Կիրակոսյանին և Գագիկ Բաբկենի Կիրակոսյանին ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանող հողամասի մակերեսը կազմում է 1044.35քմ(995.7+ 48.65):

Բաբկեն Հմայակի Կիրակոսյանին սեփականության իրավունքով պատկանող հողամասի մակերեսը կազմում է 670.65քմ(622,0+ 48.65):

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2022թ. դեկտեմբերի 07
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040
vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

07 դեկտեմբերի 2022 թվականի N 887

ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՄՈՍԿՈՎՅԱՆ ՓՈՂՈՑ ԹԻՎ 54 ՇԵՆՔԻ
ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՄԲ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ
ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով՝ ***որոշում եմ.***

Վանաձոր քաղաքի Մոսկովյան փողոց թիվ 54 շենքի հարևանությամբ գտնվող 0.001980հա մակերեսով հողամասին տրամադրել փոստային հասցե՝ Վանաձոր Վանաձոր ք., Մոսկովյան փողոց, 54/23 հողամաս:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2022թ. դեկտեմբերի 07
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040
vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

07 դեկտեմբերի 2022 թվականի N 888

ԷԼՄԻՐԱ ՀԱՅԿԱԶԻ ԵԳԱՆՅԱՆԻ ԸՆՏԱՆԻՔԻՆ ԲՆԱԿՄԱԿԵՐԵՍ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՎԱՆԱՁՈՐԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 27-Ի ԹԻՎ 154 ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Վանաձոր համայնքի Ուսանողական փողոցի թիվ 14 հանրակացարանի թիվ 410 սենյակի բնակիչ Էլմիրա Հայկազի Եգանյանի դիմումը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածով՝ ***որոշում եմ.***

1. Էլմիրա Հայկազի Եգանյանին (ծնվ. 1952թ.) հատկացնել ժամանակավոր բնակմակերես՝ Երևանյան խճուղու թիվ 90 հանրակացարանի թիվ 201 սենյակը :

2. Ուժը կորցրած ճանաչել Վանաձորի քաղաքային համայնքի ղեկավարի 2009 թվականի փետրվարի 27-ի «Զելֆինա Փայլակի Զարգարյանին բնակմակերես հատկացնելու մասին» թիվ 154 որոշումը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2022թ. դեկտեմբերի 07
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040
vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

07 դեկտեմբերի 2022 թվականի N 889

ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՁՈՐՅԱՆ (ՆԱԽԿԻՆ ՍՊԱՆԴԱՐՅԱՆ) ՓՈՂՈՑ ԹԻՎ 44 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ, ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԱՇՈՏ ՀՐԱՆՏԻ ԱԲՈՎՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Աշոտ Հրանտի Աբովյանի (ծնված՝ 07.07.1959թ.) դիմումը, 04.10.1986թ. տրված անհատական բնակելի տան տեխնիկական անձնագիրը, 29.09.2022թ. տրված ըստ օրենքի ժառանգության իրավունքի թիվ 6154 (նոտարական ակտի կոդ՝ 511-20220829-84-6218706) վկայագիրը, 29.092022թ. տրված իրավունք սահմանող փաստաթղթերի պատկանելիության վերաբերյալ իրավաբանական նշնակություն ունեցող փաստի հաստատման պահանջի մասին թիվ 6153 նոտարական ակտը (նոտարական ակտի կոդ՝ 511-20220829-218-6216590), «ԻՆԷՔՍ» ՍՊԸ-ի կողմից տրված հողամասի և շինությունների հատակագիծը, շինությունների բնութագիրը, մասնագիտական եզրակացությունը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը և հաշվի առնելով այն, որ Վանաձոր քաղաքի Ձորյան (նախկին Սպանդարյան) փողոց թիվ 44 հասցեի բնակելի տան կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ 1611.5քմ մակերեսով հողամասը և դրա վրա կառուցված բնակելի նշանակության շինությունը չեն գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի և ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում սերվիտուտ: Հողամասի ընդհանուր մակերեսը կազմում է 1611.5քմ, որը հանդիսանում է ընդհանուր բաժնային սեփականություն երկու տնատիրությունների միջև: Աշոտ Հրանտի Աբովյանի բաժնեմասը կազմում է 951.0քմ (1611.5-660.5): Անհատական բնակելի տունը կառուցվել է 1970թ-ին: Ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 189-րդ և 190-րդ հոդվածներով, 10.06.2008թ. «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով՝ ***որոշում եմ.***

1. Ճանաչել Աշոտ Հրանտի Աբովյանի սեփականության իրավունքը Վանաձոր քաղաքի Ձորյան (նախկին Սպանդարյան) փողոց թիվ 44 հասցեի բնակելի տան կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ 951.0քմ (1611.5-660.5) մակերեսով հողամասի վրա գտնվող բնակելի նշանակության բոլոր շինությունների նկատմամբ:
Հողամասի ընդհանուր մակերեսը կազմում է 1611.5քմ, որը հանդիսանում է ընդհանուր բաժնային սեփականություն երկու տնատիրությունների միջև: Աշոտ Հրանտի Աբովյանի բաժնեմասը կազմում է 951.0քմ (1611.5-660.5):
2. Հողամասի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:
3. Վանաձոր քաղաքի Ձորյան (նախկին Սպանդարյան) փողոց թիվ 44 հասցեի բնակելի տանը տրամադրել նոր փոստային հասցե՝ Վանաձոր, Վանաձոր ք., Ս. Ձորյան փողոց, 44/1 բնակելի տուն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2022թ. դեկտեմբերի 07
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040
vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

07 դեկտեմբերի 2022 թվականի N 890

ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՓԱՐԱՋԱՆՈՎԻ ՓՈՂՈՑ ԹԻՎ 4/1, ՓԱՐԱՋԱՆՈՎԻ ՓՈՂՈՑ ԹԻՎ 4/2,ՓԱՐԱՋԱՆՈՎԻ ՓՈՂՈՑ ԹԻՎ 4/3 ԵՎ ՓԱՐԱՋԱՆՈՎԻ ՓՈՂՈՑ ԹԻՎ 4/4 ՀԱՍՑԵՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ «ԿԱՄ ԴԵՎԵԼՈՓՄԵՆԹՍ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՃՇՏՎԱԾ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ,ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ՈՐՊԵՍ ՄԵԿ ԳՈՒՅՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐ ՄԻԱՎՈՐԵԼՈՒ, ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «ԿԱՄ ԴԵՎԵԼՈՓՄԵՆԹՍ» ՍՊԸ-ի տնօրենի լիազորված անձ Արշակ Վաչագանի Հովսեփյանի դիմումը, 07.09.2022թ. տրված թիվ 09.38 լիազորագիրը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 10022020-06-0040, թիվ 10022020-06-0010, թիվ 25072022-06-0008 և թիվ 20072021-06-0003 վկայականները, ԱՐՍԵՆ ԻՍԱՀԱԿՅԱՆ ՌՈՒԴԻԿԻ ԱՁ-ի կողմից տրված հողամասի հատակագիծը, ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 8-րդ հոդվածի 1-ին մասով և 59-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 43-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 14^3-րդ հոդվածի 11, 12, 13, 14 մասերով, ՀՀ կառավարության 2021թ. ապրիլի 29-ի թիվ 698-Ն որոշմամբ հաստատված կարգով, 25 փետրվարի 2021թ. թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 2-րդ ենթակետով՝ ***որոշում եմ.***

1. Փոխել Վանաձոր քաղաքի Փարաջանովի փողոց թիվ 4/1 հասցեում գտնվող 0.0903հա մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը՝ բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման հողերից՝ հասարակական կառուցապատման հողերի:
2. Փոխել Վանաձոր քաղաքի Փարաջանովի փողոց թիվ 4/2 հասցեում գտնվող 0.0903հա մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը՝ բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման հողերից՝ հասարակական կառուցապատման հողերի:
3. Փոխել Վանաձոր քաղաքի Փարաջանովի փողոց թիվ 4/3 հասցեում գտնվող 0.0903հա մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը՝ բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման հողերից՝

հասարակական կառուցապատման հողերի:

4. Հաստատել Վանաձոր քաղաքի Փարաջանովի փողոց թիվ 4/1, Փարաջանովի փողոց թիվ 4/2, Փարաջանովի փողոց թիվ 4/3 և Փարաջանովի փողոց թիվ 4/4 հասցեներում գտնվող, «ԿԱՄ ԴԵՎԵԼՈՓՄԵՆԹՍ» ՍՊԸ-ին սեփականության իրավունքով պատկանող ընդհանուր 0.574396հա մակերեսով հողամասի ճշտված սահմանները՝ համաձայն համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծի:

5. Միավորել Վանաձոր քաղաքի Փարաջանովի փողոց թիվ 4/1, Փարաջանովի փողոց թիվ 4/2, Փարաջանովի փողոց թիվ 4/3 և Փարաջանովի փողոց թիվ 4/4 հասցեներում գտնվող «ԿԱՄ ԴԵՎԵԼՈՓՄԵՆԹՍ» ՍՊԸ-ին սեփականության իրավունքով պատկանող ճշտված սահմաններով 0.574396հա ընդհանուր մակերեսով հողամասերը՝ համաձայն ԱՐՍԵՆ ԻՍԱՀԱԿՅԱՆ ՌՈՒԴԻԿԻ ԱՁ-ի կողմից տրված հատակագծի:

6. Սույն որոշման 4-րդ կետում նշված գույքին տրամադրել փոստային հասցե՝ Վանաձոր, Վանաձոր ք., Ս.Փարաջանովի փողոց, թիվ 4/1 հողամաս:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2022թ. դեկտեմբերի 07
ք.Վանաձոր